ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար տոներային քարտրիջների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/54» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի հոկտեմբերի 29-ին կնքված N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/54-1» պայմանագրում 2020 թվականի դեկտեմբերի 28-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման համար հատկացվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 8.5 և 8.13 կետեր:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
29.10.2020թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/54-1» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «28» «12» 2020թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պաշտոնակատար Նարեկ Գաբրիելյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դավիթ Մարկոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները, և հիմք ընդունելով 29.10.2020թ. կնքված N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/54-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով ֆինանսական միջոցների առկայությունը և Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման անհրաժեշտությունը՝ Կողմերը որոշեցին Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Դատական դեպարտամենտ	***«Նորմա-պլյուս» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ք. Երևան, Մաշտոցի 2, տարածք 60
Հ/Հ՝ 900011025757	Հ/Հ 1570002079340100
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ 00053663
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Ղեկավար՝ Ն. Գաբրիելյան	Տնօրեն՝ Դ. Մարկոսյան
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 28 » « 12 » 2020թ. կնքված N 1 համաձայնագրի

(Հավելված N 2
« 29 » « 10 » 2020թ. կնքված
N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/54-1» ծածկագրով պայմանագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում	
			դեկտեմբեր	**Ընդամենը**
1	30121460/530	Տոներային քարտրիջ	2070000	**2070000**
2	30121460/531	Տոներային քարտրիջ	2850000	**2850000**
5	30121460/534	Տոներային քարտրիջ	228000	**228000**

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
Հ/Հ՝ 900011025757
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Ղեկավար Ն. Գաբրիելյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Նորմա-պլյուս» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Մաշտոցի 2, տարածք 60
Հ/Հ 1570002079340100
ՀՎՀՀ 00053663
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Տնօրեն՝ Դ. Մարկոսյան

/ստորագրություն/
Կ.Տ